

տօնախմբութիւնը, որ զվարչութիւնը մեծ վախի և զգուշութեան մէջ ձգեց սպառնոց եալ խառնակութիւններէ : Երկու կողմի հակառակորդ մահմէտականաց մէջ մեծ ատելութիւն մը կար, և Շիայք այս կառավարչին սպառնութիւնը առիթ կ'ուզէին առնուլ իրենց ատելութիւնը 'ի գործ երթարով բախ . Խմբովին սուսիկանութեան երթարով բախ . « Այսուք են այն մարդիկն որ ձեր փոխարքայն սպանեցին . Վայրկեան մը աշքերիդ գոցեցէք, ու մենք ատոնց արինը մեր ափովլ կը խմենք, կեցած տեղերնին ալ ջրով կը լուանք : » Այս բան բաւական է միայն որ ցուցընէ թէ ինչ աստիճան ատելութիւն կայ այս երկու մահմէտական բաժանմանց մէջ : Նոյն հանդիսին առթով ամենայն միջոց 'ի վար արկին թշնամութեամբ իրարու հանդիվելու . բայց սոսիկանութիւնն այնպէս իր զգուշութիւնները րազմացուց՝ որ նոյն օրուն վտանգը թեթե անցաւ, միայն մէկ քանի հոգւոյ գուրել պատռելով ու երկու հարիւր հոգւոյ շաբ բանտարկելով :

Արդ ինչպէս այս երկու բաժանմանց մէջ ատելութիւնը վառէ, նոյնպէս է նաև միւս ցեղերու ժողովրդոց մէջ . ի 1874 Մահմետականաց ու Փարսից մէջ ծագեցաւ ատելութեան կորիւ : Որովհետև Մահմետականաց գերեցմանոց Փարսից գլխաւոր տաճարին մերձ է, Փարսիք Մահմետականաց մեծ բազմութիւն մը տեսնելով որ դագաղի մը ետքէն կ'երթային, վախցան շըլայ թէ իրենց տաճարին վրայ յարձկելու դիտաւորութիւն ունենան . այսու երկիւզիւ յուզեալսկսան Մահմետականաց վրայ քարեր արձակել : Այս գործէս մեծ շփոթութիւն մը ծագեց . Մահմետականք կատաձ'

վաղեցին Փարսից վրայ, անոնց չատ մը տաճար կործանեցին, և չատ մը մարդ ալ սպանեցին :

Այսպէս հզօր են կիրք և բաժանմունք այս բազմամարդ քաղաքիս ժողովրդոց մէջ . բայց միանգամայն այս անզատեհութիւնն մեծ նրանց անգիտական վարչութեան, որ գրեթէ բռանց զինուորի և առանց հրացանի եօթը հարիւր հազար մարդ կը կասվարէ անվտանգ : Կաև այս ստոյդ է որ Ժողովուրդը կրկնապէս կը շահի Անգղիոյ աիրապետութեամբ . վասն զի եթէ Անգղիացիք բաշույն ու երկիրը անտէրունչ մնայ, ժողովուրդը իսկոյն սուր առած ինքնը պիտի ջարդէ . և ասէկ կը հետեւի որ անհրաժեշտ կարեոր է օտար կառավարութիւն մը պաշտպանութիւնը :

Բայց եթէ օր մը գոյ որ քաղաքականութեամբ այս ամենայն ժողովուրդը իրարութիւնը կասկնան և մէկմէկու ըսեն՝ ամենք եզրաբեր ենք, ամենքս մի և նոյն հայրենեաց ծնունդ, մի և նոյն օգը կը ծծենք, նոյն շահը նոյն օգուտը կը վայելենք . Թողտաճարը մեր կրօնական զդացումն ընդունի, բայց մեր քաղաքական կենաց չընդղիմանայ, չչակառակի . մեր հայրենական սէրը հաւասարապէս ըլլայ . այն օրը, կըսեմ, որ Հնդիկը կարենայ այս խորհրդածութիւններն ընել ու յաստենէ, Անգղիացոյն և ատարին ուրիշ բան ընելուն պիտի չմնայ եթէ ոչ իւր գլխարկը գլուխը դնել և իւր նաւերը ապաւինիլ . շատ է՝ որ անոնց մէջ նետուելու ժամանակ բաւէ : Անկային առայժմ վախ չկայ . դար պէտք է գուցէ որ երրորդական քաղաքականութիւնը Հնդկին մորթը թափանցէ :

Այս շարունակուի :

Հ. ՅԱԿՈՎԵՍ Պ. ԽՍԱՎԵՐԵՆԵՑ

Թ Ռ Զ Ն Ի Կ

Հաւն Աստուծոյ բնաւ չըգիտէ,
Աւ մըտատանջ հողք և վաստակ .
Եւ բազմահոգ ու յօրինէ
Բզուանիկ իւր ամրաքատակ :
Դերկայն գէշըն նընչէ ճըլին .
Մարէ արե բռուրագեղ,
Հաւն Աստուծոյ լըսէ ճայնին,
Սունէ ճըլիայ 'ի բիւր գէղցէլ :

Ցես գարնայնոյն զըւարթագին
Գընայ ամառըն տապակէց .
Մէգ, մառախուզ, աւուրբ գիշին
Լուգ աշնայնոյն գառնան առ մեզ,
Ջանձրոյն պատէ զազը մարդկային .
Հաւնին յաշխարհ 'ի հեռաստան
Ցայնկոյս ծովու, 'ի կողմն ըերին
Գընայ 'մինչև ցըդարձ գարնան :

ՓՈՒՇԳԻՆ